[illegible]

[illegible] 1934

347
2-25

1 MAR 2010

347
Հ-25

ՀԽՀ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(Առ 1 դեկտեմբերի 1934 թ. ընդունված փոփոխություններով յեվ լրացումներով)

E
1421

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ
1934

09 SEP 2013

37300

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ 5-րդ գումարման կենտրոնական գործադիր կոմիտեի 2-րդ նստաշրջանի

ՀՍԽՀ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1927 թ. Սեպտեմբերի 18-ին

Ամուսնության, ընտանիքից և խնամակալությունից նոր հեղափոխական կենցաղի պայմաններում ծագող իրավական հարաբերությունները կարգավորելու, մոր և մանավանդ զավակների շահերը ապահովելու, նաև ամուսինների իրավունքները ստացվածքի և զավակների դաստիարակության վերաբերմամբ հավասարեցնելու նպատակով Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 2-րդ նստաշրջանը ՎՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգիրքը և կիրարկության դնել 1927 թ. նոյեմբերի 1-ից։

2. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգիրքը հաստատելու հետևանքով վերացնել «Քաղաքացիական կացության ակտերի, ամուսնության, ընտանեկան և խնամակալության» իրավունքի վերաբերյալ ՌՍՖՍՀ 1918 թ. որենսգրքի ներգործությունը ՀՍԽՀ սահմաններում (ՀՍԽՀ Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետը.—Դեկրետ. և Հրամ. Ժող. 1920—21 թ. պր. 1. հոդ. 39)։

3. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգիրքը հաստատելու հետևանքով իրենց ուժը կորցրած համարել հետևյալ որենսդրական ակտերը.

1) Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի «Ամուսնացողների ցուցակագրության մասին» վորոշումը. (Որ. Ժող. 1925 թ. № 2, կետ. 14)։

2) «Ամուսնացողների ցուցակագրության» վերաբերյալ Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի վորոշման փոփոխության մասին. (Որ. Ժող. 1926 թ. № 2. հոդ. 16)։

3) Կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 15-ի «Քաղաքացիական կացության ակտերի, ամուսնության, ընտանիքի և խնամակալության իրավունքի վերաբերյալ Որենսգրքի 3-րդ բաժնի 5-րդ գլուխը—վորդեգրության վերաբերյալ փոփոխելու մասին»—վորոշումը. (Որ. Ժող. 1926 թ. № 10. հոդ. 88)։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ՝ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Յերևան

Հրապարակվ. «Խորհրդ. Հայաստ.» 1927 թ. հոկտ. 14-ին, № 235.

27538-60

Հ. Ս. Խ. Հ.

Ամուսնության, ընտանիքի յեվ խնամակալության որենսգիրք

ԲԱԺԻՆ I

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Ամուսնության տոմարագրությունը սահմանվում է ինչպես պետական և հասարակական շահերի տեսակետից, այնպես ել ամուսինների և զավակների անձնական և ստացվածային իրավունքների պաշտպանությունը դյուրացնելու համար։ Ամուսնությունը ձևակերպվում է քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում տոմարագրելու միջոցով՝ այս Որենսգրքի IV բաժնում սահմանված կարգով։

2. Ամուսնության տոմարագրությունը քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում ամուսնության փաստի անվիճելի ապացույց է հանդիսանում։ Կրոնական ծիսակատարություններով տեղի ունեցած ամուսնության փաստը հաստատող փաստաթղթերը իրավական վորևե նշանակություն չունեն։

Ծանոթություն.—Մինչև 1920 թ. դեկտեմբերի 21-ը կրոնական ծիսակատարություններով կատարված ամուսնությունները հավասարեցվում են տոմարագրված ամուսնություններին։

3. Փաստապես ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող և սահմանված կարգով չտոմարագրված անձերն իրավունք ունեն ամեն ժամանակ ձևակերպելու իրենց հարաբերությունները տոմարագրության միջոցով, հիշատակելով, թե փաստորեն վորքան ժամանակ են միասին ապրում։

ԳԼՈՒԽ 2.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ամուսնությունը տոմարագրելու համար անհրաժեշտ է—ա) ամուսնությունը տոմարագրելու փոխադարձ համաձայնությունը, բ) ամուսնական հասակ ունենալը և գ) այս որենսգրքի 135-րդ հոդվ. հիշատակված փաստաթղթերը ներկայացնելը։

5. Ամուսնական հասակը սահմանվում է կանանց համար 16 տարին, տղամարդկանց համար—18 տարին։

6. Ամուսնությունները տոմարագրվել չեն կարող—ա) յեթե ամուսնացողներից թեկուզ մեկ կողմն արդեն իսկ տոմարագրված կամ չտոմարագրված ամուսնական հարաբերությունների մեջ է մեկ ուրիշի հետ, բ) այն անձերի միջև, վորոնցից թեկուզ մեկը սահմանած կարգով տկարամիտ կամ հոգական հիվանդ է ճանաչված, գ) ուղիղ վերընթաց կամ վայրընթաց գծով ազգականության մեջ գտնվող անձերի միջև (որինակ. հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պապը և թոռը,) այլ և հարազատ և խորթ քույրերն ու յեղբայրները, ինչպես նրանք, վորոնք ծագում են ընդհանուր հորից և մորից, այնպես եվ նրանք, վորոնք կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր, կամ ընդհանուր մայր, բայց՝ տարբեր հայրեր։

Գ Լ Ո Ւ Խ 3.

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ամուսինները կարող են գրվել մեկ ընդհանուր՝ մարդու կամ կնոջ ազգանունով, կամ ամուսինների միացյալ ազգանունով, կամ պահպանել իրենց մինչամուսնական ազգանունները։ Համապատասխան հայտարարությունն այդ մասին նրանք պետք է անեն ամուսնության տոմարագրության ժամանակ։

8. ՀՍԽՀ քաղաքացիության և ոտարյերկրյա քաղաքացիության մեջ գտնվող անձերի ամուսնությունը տոմարագրելիս նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր քաղաքացիությունը։ Այդ անձանց քաղաքացիությունը կարող է փոփոխության յենթարկվել միութենական որենքով սահմանված դյուրացված կարգով։

9. Յերկու ամուսինն եվ կատարելապես ազատ են իրենց համար զբաղմունք և արհեստ ընտրելու։ Ընդհանուր տնտեսություն վարելու կարգը սահմանվում է ամուսինների փոխադարձ համաձայնությամբ։ Ամուսիններից մեկի ընակավայրի փոփոխությունը մյուս ամուսնու համար նրան հետևելու պարտականություն չի ստեղծում։

10. Մինչև ամուսնությունը ամուսիններին պատկանող գույքը նրանց բաժան գույքն է համարվում։ Ամուսնության ընթացքում վաստակած գույքը համարվում է ամուսինների ընդհանուր գույքը։ Ամուսիններից յուրաքանչյուրին պատկանող գույքի չափը վեճ ծագելու դեպքում վորոշվում է դատարանի կողմից։

Մեկնություն.—Ամուսինների իրավունքները հողի, այլ և գյուղացիական ծխի ընդհանուր ոգտագործության գույքի վերաբերմամբ սահմանվում են Հողային Որենսգրքի 64 և 65 հոդվածներով և սրանց պարզաբանման ու լրացման նպատակով հրատարակված որենքներով։

11. Այս որենսգրքի 10-րդ հոդվածի ներգործությունը տարածվում է նաև այն անձանց գույքի վրա, վորոնք թեկուզ և տոմարագրված չեն, բայց փաստապես ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվում, յեթե նրանք փոխադարձաբար իրար ամուսիններ են համարում, կամ յեթե նրանց միջև ամուսնական հարաբերությունները հաստատված են դատարանի կողմից՝ նկատի առնելով նրանց կյանքի փաստական նշաններն ու հանգամանքները։

12. Այն դեպքում, յերբ ամուսնությունը տոմարագրված չե, ամուսնական կենակցության ապացույց են հանդիսանում դատարանի համար—նայած հանգամանքներին—միատեղ կենակցելու փաստը, յերբ կենակցության պահին գոյություն ունի ընդհանուր տնտեսություն, ամուսնական հարաբերությունների արտահայտությունը յերրորդ անձանց առջև անձնական գրագրության մեջ և այլ փաստաթղթերում, կամ փոխադարձ նյութական ոժանդակությունը, զավակներին միատեղ դաստիարակելը և այլն։

13. Ամուսինները կարող են ունենալ իրար հետ որենքով թույլատրված ամեն տեսակ ստացվածային և պայմանագրից բղխող փոխհարաբերություններ։ Ամուսինների միջև կայացած այն համաձայնությունները, վորոնք նվազեցնում են կնոջ կամ մարդու ստացվածային իրավունքները, անվավեր են և պարտադիր չեն ինչպես յերրորդ անձանց, այնպես եվ ամուսինների համար, վորոնց իրավունք է վերապահվում այդ համաձայնությունները կատարելուց ամեն ժամանակ հրաժարվելու։

14. Միջոցներից զուրկ անաշխատունակ ամուսինն իրավունք ունի ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, յեթե վերջինը դատարանի վորոշմամբ ոժանդակություն ցույց տալու ընդունակ է ճանաչվում։ Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի միջոցներից զուրկ աշխատունակ ամուսինը նաև գործազրկության ժամանակ։

15։ Միջոցներից զուրկ անաշխատունակ ամուսնու՝ մյուս ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը պահպանվում է նաև ամուսնությունը լուծելուց հետո մինչև այն պայմանների

փոխվելը, վորոնք այս որենսգրքի 14-րդ հոդվ. համաձայն ապրուստի միջոց ստանալու հիմք են ծառայում. սակայն վոչ ավելի, քան ամուսնությունը լուծելուց հետո մեկ տարվա ընթացքում: Միջոցներից զուրկ գործազուրկ ամուսնուն հասանելիք ուժանդակության չափը ամուսնությունը լուծելու դեպքում սահմանվում է դատարանի կողմից վոչ ավելի, քան վեց ամիս ժամանակով և չի կարող ավելի լինել, քան սոցիալական ապահովության համապատասխան նպաստի գումարի չափը:

16. Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն ինչպես ամուսնության, այնպես ել ամուսնությունը լուծելու դեպքում նաև այն անձերը, վորոնք փաստապես ամուսնական հարաբերությունների մեջ են, թեկուզ և այդ հարաբերությունները տոմարագրված չեն, յեթե նրանք համապատասխանում են այս Որենսգրքի 11 և 12 հոդվածներով նախատեսված նշաններին:

ԳԼՈՒԽ 4.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

17. Ամուսնությունը դադարում է ամուսիններից վորևե մեկի մահվան դեպքում, այլ և յեթե դատարանը նրան մահացած է ճանաչում:

18. Ամուսինների կենդանության դեպքում ամուսնությունը կարող է լուծվել ինչպես ամուսինների փոխադարձ համաձայնությամբ, այնպես ել նրանցից վորևե մեկի միակողմ ցանկությամբ:

19. Ինչպես տոմարագրված, այնպես և չտոմարագրված, սակայն դատարանի կողմից այս Որենսգրքի 12-րդ հոդվ. համաձայն հաստատված ամուսնության լուծումը ամուսինների կենդանության որով կարող է արձանագրվել քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում (ապահարզան):

20. Ամուսնալուծության փաստը կարող է հաստատվել նաև դատարանի կողմից:

21. Ամուսնալուծությունը տոմարագրելիս ամուսինները հայտնում են, թե ինչ ազգանունով և կամենում գրվել նրանցից յուրաքանչյուրը: Ամուսինների միջև այդ հարցում համաձայնություն չլինելու դեպքում նրանցից յուրաքանչյուրին վերապահվում է նրա մինչամուսնական ազգանունը:

22. Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինների կողմից ամուսնալուծությունը տոմարագրելիս անպայման հարց է տրվում այն մասին, թե ամուսիններից վորի մոտ և զավակներից վորն է մնում դաստիարակվելու, և թե նրանցից վորը և ինչ չափով պետք է հոգա զավակների ապրուստի ծախքերը, այլ և անաշխատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափի հարցը: Յեթե ամուսինների միջև այդ հարցերի վերաբերմամբ համաձայնություն կայացել է, այդպիսին մուծվում է ամուսնալուծության տոմարագրության մատյանը, վորի քաղվածքը տրվում է ամուսիններից յուրաքանչյուրին: Այդ համաձայնությունը նախկին ամուսիններին և զավակներին չի զրկում հետագայում ընդհանուր դատապահանջի կարգով՝ համաձայնությամբ նախատեսվածից ավելի կամ պակաս չափով ապրուստի միջոց պահանջելու իրավունքից:

23. Համաձայնության մեջ հիշատակված պարտավորությունները չկատարելու դեպքում շահագրգռված անձերը կարող են դիմել ժողովրդական դատարանին՝ Քաղաքացիական Դատավարության Որենսգրքի 210-րդ հոդվ. «գ» կետի համաձայն դատական հրաման ստանալու համար:

24. Համաձայնություն չլինելու դեպքում զավակների, այլ և կարոտյալ և անաշխատունակ ամուսնու ապրուստի միջոցի չափի հարցը տնորինվում է ընդհանուր դատապահանջի կարգով, ըստ վորում դատարանը հայցախնդիրն ընդունելու հետ միաժամանակ, նայելով գործի հանգամանքներին և յելնելով զավակների շահերի պաշտպանության տեսակետից, վորոշում է կայացնում այն մասին, թե ժամանակավորապես ում մոտ պետք է դաստիարակվեն զավակները, թե ծնողներից վորը և ինչ չափով է պարտական ժամանակավորապես, մինչև վեճի վերջնական լուծումը, հոգալու զավակների, այլ և կարոտյալ և անաշխատունակ ամուսնու մասին:

Կատարյալ անաշխատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափը ևս համաձայնություն չլինելու դեպքում վորոշվում է դատարանի կողմից ընդհանուր դատապահանջի կարգով:

ԲԱԺԻՆ II

ԶԱՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

25. Զավակների և ծնողների փոխադարձ իրավունքները

հիմնվում են արենակցության վրա։ Այն զավակները, որոնց ծնողներն ամուսնացած չեն, վայելում են նույնպիսի իրավունքներ, ինչպես և ամուսնացած ծնողների զավակները։

26. Զավակի հայրը և մայրը արձանագրվում են ծննդամատյանի մեջ։

27. Ծնողների մասին արձանագրություն չլինելու կամ արձանագրության անկանոնության և թերության դեպքում շահագրգռված անձանց իրավունք և վերապահվում դատական կարգով ապացուցելու կամ ժխտելու հայրությունը և մայրությունը։

28 Զավակի շահերի պաշտպանության նպատակով մորն իրավունք և վերապահվում հղության շրջանում կամ զավակը ծնվելուց հետո հայտարարություն ներկայացնել զավակի հոր մասին՝ քաղաքացիական կացության ակտերի արձանագրության տեղական մարմնին ըստ իր բնակավայրի, հիշատակելով զավակի հոր անունը, հայրանունը, ազգանունը և բնակության վայրը։

29. Հայտարարությունն ստանալու մասին քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինը տեղեկացնում է այն անձին, որը հայտարարության մեջ նշված է որպես հայր։ Եթե վերջինը ծանուցում ստանալու որից մեկ ամսվա ընթացքում առարկություն չներկայացնի, ապա նա արձանագրվում է որպես զավակի հայր։ Հայտարարության մեջ որպես հայր հիշատակված անձը քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմնից ծանուցումն ստանալու որից մեկ տարվա ընթացքում կարող է հայց հարուցել զավակի մոր դեմ՝ նրա հայտարարության անճշտության մասին։

30. Զավակ ծնվելուց հետո հայրությունը հաստատելու հայտարարությամբ զավակի մայրը իրավունք ունի դիմելու նաև դատարանին։

31. Եթե դատարանն ընդունի, որ զավակի հայրը հայտարարության մեջ հիշատակված անձն է (այս Որենսգրքի 28 և 30 հոդվածները), ապա այդ մասին նա որոշում է կայացնում և պարտականություն է դնում հոր վրա մասնակցելու հղության, ծննդաբերության, զավակի ծննդյան ու ապրուստի միջոցներ հայթայթելու հետ կապված ծախքերին, այլ և ժամանակելու զավակի մորը՝ նրա հղության ժամանակ և ծննդաբերությունից հետո 6 ամսվա ընթացքում

32. Եթե դատարանը հայրության հարցը քննելիս հաստատի, որ զավակի մայրը սաղմնավորման շրջանում բացի այս Որենսգրքի 28-րդ հոդ. հիշատակված անձից՝ սեռական հարաբերության մեջ է եղել նաև այլ անձանց հետ, ապա դատարանը, ելնելով բացառապես զավակի շահերից, որոշում է կայացնում այդ անձերից որևէ մեկին զավակի հայր ճանաչելու մասին և դնում է նրա վրա այս Որենսգրքի 31-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները։

Գ Լ Ո Ւ Խ 2.

ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՉԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Ծնողական իրավունքները կիրառվում են բացառապես նկատի առնելով զավակների շահերը, և այդ իրավունքները անկանոն կերպով կիրառելու դեպքում դատարանին իրավունք է վերապահվում զրկելու ծնողներին իրենց իրավունքներից։

34. Եթե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են կրում, ապա այդ ազգանունն է սահմանվում նաև զավակների համար։ Եթե ծնողներն ընդհանուր ազգանուն չեն կրում, ապա զավակների ազգանունը սահմանվում է ծնողների համաձայնությամբ։ Եթե ծնողների միջև ազգանվան մասին համաձայնություն չլինի, ապա զավակների ազգանունը վորոշվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից։ Հոր անհայտ լինելու դեպքում զավակը կրում է մոր ազգանունը։ Ամուսնալուծության դեպքում զավակները պահպանում են այն ազգանունը, որն ստացել են ծնողներն արձանագրվելու ժամանակ։

35. Ծնողների տարբեր քաղաքացիության դեպքում, եթե նրանցից թեկուզ միայն մեկը զավակ ծնվելու պահին ՀՍԽՀ քաղաքացի է եղել և եթե զավակ ծնվելու ժամանակ ծնողներից թեկուզ միայն մեկը բնակվել է ԽՍՀ Միության տերրիտորիայի վրա, զավակը համարվում է ՀՍԽՀ քաղաքացի։ Այն դեպքում սակայն, եթե զավակի ծնվելու պահին ծնողներից մեկը եղել է ՀՍԽՀ քաղաքացի, բայց այդ պահին երկու ծնողն էլ ԽՍՀ Միության տերրիտորիայից դուրս են բնակվել,—զավակի քաղաքացիությունը վորոշվում է ծնողների համաձայնությամբ։

36. ՀՍԽՀ քաղաքացի հանդիսացող և ԽՍՀ Միության տերրիտորիայի վրա բնակվող ծնողներից մեկի քաղաքացիությունը փոփոխությունը վոչ մի կերպ չի անդրադառնում զավակների քաղաքացիության վրա։ Զավակների քաղաքացիությունն այն դեպքում, երբ ՀՍԽՀ քաղաքացի հանդիսացող, սակայն ԽՍՀ

Միության տերիտորիայից դուրս ապրող ծնողներից վորևե մեկը դուրս գա ՀՍԽՀ քաղաքացիությունից, վորոշվում է ծնողների համաձայնությամբ,

Մանրություն.—Ծնողների քաղաքացիության այնպիսի փոփոխության դեպքում, վորի հետևանքով յերկու ծնողն էլ դառնում են ՀՍԽՀ քաղաքացի, կամ՝ ընդհակառակը, յերկուսն էլ դադարում են ՀՍԽՀ քաղաքացի լինելուց, համապատասխան կերպով փոխվում է նաև այն զավակների քաղաքացիությունը, վորոնց 14 տարին դեռ չի լրացել: Տասնչորս տարին լրացրած զավակների քաղաքացիությունը չի փոխվում ծնողների քաղաքացիությունը փոխվելիս:

37. Ծնողների համաձայնությունը՝ զավակների այս կամ այն կրոնին պատկանելու մասին իրավական վոչ մի նշանակություն չունի:

38. Զավակների վերաբերյալ բոլոր միջոցները ձեռնարկվում են յերկու ծնողների կողմից միատեղ:

39. Ծնողների մեջ տարաձայնություն լինելու դեպքում, վիճելի հարցը լուծվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից՝ ծնողների մասնակցությամբ:

40. Յեթե ծնողները միասին չեն ապրում, ապա նրանց համաձայնությունից և կախված, թե նրանցից վորի մոտ պետք է մնան անչափահաս զավակները: Ծնողների միջև համաձայնություն չլինելու դեպքում, այդ հարցն ընդհանուր դատապահանջի կարգով լուծում է ժողովրդական դատարանը:

Զավակի 10 տարին լրացնելուց հետո դատարանը պետք է հարցում անի նրան, թե նա ծնողներից վորի մոտ է կամենում մնալ. զավակի հայտարարությունը այդ մասին դատարանի համար պարտադիր չէ, յեթե դատարանը գտնում է, վոր զավակին ավյալ ծնողի մոտ թողնելը չի համապատասխանում նրա խնամքան շահերին:

41. Ծնողները պարտավոր են հոգ տանել անչափահաս զավակների և մասնավորապես՝ նրան դաստիարակելու և հանրորեն ոգտակար գործունեության համար պատրաստելու մասին:

42. Ծնողները պարտավոր են ապրուստի միջոց հայթայթել ինչպես անչափահաս, այնպես և կարիքավոր անաշխատունակ զավակներին:

43. Անչափահաս զավակների թե անձնական և թե ստացվածային շահերի պաշտպանությունն ընկնում է ծնողների վրա, վորոնք զավակների ներկայացուցիչներն են հանդիսանում դատարանում և այլ հաստատություններում:

44. Ծնողներն նրավունք ունեն դատապահանջի կարգով պահանջելու, վոր զավակներին իրենց վերադարձնեն այն բոլոր անձերը, վորոնք նրանց իրենց մոտ են պահում վոչ որենքի կամ դատարանի վորոշման հիման վրա. դատարանը ձևականորեն կաշկանդված չէ ծնողների իրավունքով և յուրաքանչյուր անգամ գործը պետք է լուծի բացառապես նկատի ունենալով զավակների շահերը:

45. Ծնողներն իրավունք ունեն դաստիարակություն և ուսումն տալու նպատակով զավակներին հանձնելու ուրիշներին. նրանց իրավունք է վերապահվում նաև զավակների համաձայնությամբ նրանց աշակերտության և վարձու աշխատանքի տալու պայմանագրեր կնքել այն դեպքում և այն կարգով, վորոնք նախատեսված են աշխատանքի գործող որենսդրությամբ:

46. Այն դեպքում, յերբ ծնողները չեն կատարում կամ անկանոն և անորինաչափ կերպով են կատարում իրենց պարտականությունները զավակների նկատմամբ, այլ և այն դեպքում, յեթե դաժան վերաբերմունք են ցույց տալիս դեպի զավակները, —դատարանի վորոշմամբ այդ ծնողները կարող են զրկվել իրենց ծնողական իրավունքներից:

Մանրություն.—1. Ծնողական իրավունքներից զրկելու գործերը յենթակա յեն ժողովրդական դատարանին և կարող են հարուցվել համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից, այլ և մասնավոր անձանց հայտարարությունների հիման վրա:

Մանրություն.—2 Խնամակալության մարմիններին իրավունք է վերապահվում մինչև դատարանի վճիռը՝ վորոշում կայացնել զավակներին առնելու ծնողներից կամ այլ անձերից, վորոնց խնամքի տակ նրանք գտնվում են, յեթե զավակներին այդ անձանց մոտ թողնելը վտանգավոր է զավակների համար:

47. Ծնողական իրավունքներից դատարանի վորոշմամբ զրկված ծնողները չեն զրկվում խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին հանձնված զավակների հետ տեսակցելու իրավունքից: Սակայն խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ծնողներին թույլ չտալ տեսակցել զա-

վակների հետ, յեթե գտնի, վոր այդպիսի տեսակցությունը կարող է վնասակար ազդեցություն ունենալ զավակների վրա, մինչև դատարանի հատուկ վորոշումը։

48. Զավակների ապրուսաը հոգալու պարտականություններն ընկնում են յերկու ծնողների վրա։ Նրանց կողմից տրվող ապրուստի միջոցների չափը սահմանվում է նրանց նյութական վիճակի համեմատ։

49. Զավակները պարտավոր են ապրուստի միջոցներ հայթայթել իրենց կարիքավոր անաշխատունակ ծնողներին։

50. Յեթե ծնողները չկամենան ապրուստի միջոց հայթայթել զավակներին, այլ և յեթե զավակները չկամենան հոգալ ծնողների ապրուսաը այս Որենսգրքի 42 և 49 հոդվ. նախատեսված դեպքերում, ապա ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող անձերը կարող են դատական կարգով պահանջել իրենց ապրուստը։

Մանրություն.—Ծնողների կամ զավակների նյութական դրությունը փոխվելու դեպքում դատարանի վճիռը կարող է փոխվել դատարանի կողմից՝ ընդհանուր դատապահանջի կարգով։

51. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում զավակներին ապրուստի միջոցներ հայթայթելու պարտականությունից։

52. Միատեղ ապրուստի միջոցներ հայթայթելու պարտավորված անձերը պատասխանատու յեն հավասար չափով՝ բացառությամբ այն դեպքերի, յերբ դատարանը, նկատի առնելով պարտավորված անձերի նյութական տարբեր վիճակը, կամ նրանցից վորևե մեկի բազակայությունը, կամ այլ հարգելի պատճառներով, անհրաժեշտ կհամարի այդ պարտականության կատարմանը մասնակցելու այլ չափեր սահմանել։

53. Ծնողների և զավակների իրավունքները գյուղացիական ծխի գույքի վերաբերմամբ սահմանվում են Հողային Որենսգրքի համապատասխան հոդվածներով։

54. Կարիքավոր անչափահաս յեղբայրները և քույրերը իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու բավականաչափ միջոցների տեր իրենց յեղբայրներից և քույրերից այն դեպքերում, յերբ հիշյալ յեղբայրներն ու քույրերը չեն կարող ապրուստի միջոցներ ստանալ իրենց ծնողներից՝ վերջինների միջոցներից զուրկ լինելու կամ չքավորության պատճառով։

55. Անաշխատունակ և կարիքավոր պապն ու տատը իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու իրենց բավականաչափ միջոցների տեր թոռներից, յեթե միայն անկարող են այդ միջոցներն ստանալու իրենց ամուսիններից կամ զավակներից։ Նմանապես ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն իրենց բավականաչափ միջոցների տեր պապից և տատից նաև թոռները, յեթե այդ միջոցները չեն կարող ստանալ իրենց ծնողներից։

56. Աշխատավորական, հողագործական տնտեսության (ծխի) անդամից զավակի համար ապրուստի միջոցներ բռնագանձելիս, յերբ նրա անձնական միջոցները բավական չեն զավակին ապահովելու համար, վերջինս իրավունք ունի ապրուստի միջոցն ստանալու ծխի ընդհանուր գույքի այն մասից, վորը հասնում է ծխի հիշյալ անդամին։

Այս պարագաներում բռնագանձումը—

1) թույլատրվում է միմիայն ծխի այնպիսի անդամների նկատմամբ, վորոնք ընդհանուր տնտեսություն են վարում, և

2) կարող է դարձվել միմիայն գրամական գումարների և տնտեսության արդյունքների վրա, սակայն՝ չի կարող տեղի ունենալ հողից, անասուններից, ինվենտարից և ծխի ընդհանուր տնտեսության սարք ու կարգից հարկադիր կերպով բաժին հանելու միջոցով, յեթե այդ ձևով բաժին հանելը չի կատարվում այն կարգով և պայմաններում, վորոնք նախատեսված են Հողային Որենսգրքով՝ աշխատավորական հողագործական տնտեսությունների (ծխերի) բաժանության համար։

Ստացվածային բաժին հանելու դեպքում անջատվողին ծխի ընդհանուր գույքից պետք է բաժին հանվի այն աշխատանքի և միջոցների քանակության համեմատ, վոր նա դրել է ծխի տնտեսության մեջ։

ԳԼՈՒԽ 3.

ՎՈՐԴԵԳՐՈՒՄ

57. Վորդեգրումը թույլատրվում է միմիայն փոքրահասակների և անչափահասների նկատմամբ և բացառապես յերեխաների շահերը նկատի ունենալով։

58. ԽՍՀՄ տերրիտորիայի վրա բնակվող ոտարյերկրյա քաղաքացիները կարող են վորդեգրել խորհրդային քաղաքացիների զավակներին այս որենսգրքով նախատեսված կանոնների համաձայն և բացի դրանից, յուրաքանչյուր առանձին դեպքում

անպայման թույլտվություն ստանալով ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունից։

Եթե վորդեգրողը պատկանում է բանվոր դասակարգին կամ ուրիշի աշխատանքից չգոյացող գյուղացիությանը, վերոհիշյալ հատուկ թույլտվությունը տալիս է վորդեգրվողի բնակության վայրի քաղխորհուրդը կամ շրջանային գործադիր կոմիտեն։

59. Վորդեգրումը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վորոշմամբ և յենթակա յե տոմարագրության ընդհանուր կարգով՝ քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում։

60. Վորդեգրման ժամանակ վորդեգրվողը կարող է ստանալ վորդեգրողի ազգանունը, այլ և, յեթե վորդեգրվողը համաձայն է, նաև վորդեգրողի հայրանունը։

61. Յեթե վորդեգրվողը ծնողներ ունի, կամ այն դեպքում, յերբ վորդեգրվողը գտնվում է խնամակալության կամ հոգաբարձության ներքո, վորդեգրելու համար անհրաժեշտ է ծնողական իրավունքներից չզրկված ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների համաձայնությունը։

62. Յեթե վորդեգրում է ամուսնացած վորևե մեկը, անհրաժեշտ է նաև մյուս ամուսնու համաձայնությունը։

63. 10 տարին լրացրած յերեխաների վորդեգրումն առանց նրանց համաձայնության՝ չի թույլատրվում։

64. Վորդեգրվածներն ու նրանց սերունդը վորդեգրողների նկատմամբ և վորդեգրողները՝ վորդեգրվածների և նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական, սաացվածային իրավունքների և պարտականությունների ասպարիզում հավասարեցվում են ծագումով ազգականներին։

65. Վորդեգրումը, յերբ այդ կատարվել է վորդեգրվողի ծնողների բացակայությամբ կամ առանց նրանց համաձայնություն ստանալու, կարող է բեկանվել ծնողների խնդրանոք՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից, յեթե դավակը նրանց վերադարձնելը համապատասխանում է դավակի շահերին։ Տասը տարեկանից ավելի հասակ ունեցող անչափահասի վորդեգրումը բեկանելու համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը։

66. Յուրաքանչյուր անձ կամ հասատատություն կարող է դատական կարգով հարց հարուցանել վորդեգրումը բեկանելու մասին, յեթե այդ են պահանջում յերեխայի շահերը։

67. Վորդեգրումը բեկանելու դեպքում դատարանը վորոշում է կայացնում յերեխան վորդեգրողից վերցնելու և խնամակալության ու հոգաբարձության մարմինների խնամքին հանձնելու մասին։ դատարանը կարող է իր վորոշմամբ պարտավորեցնել վորդեգրողին ապրուստի միջոցներ հայթայթել յերեխայի համար։

ԲԱԺԻՆ III

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1.

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

68. Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակի անձի, նրա որինական իրավունքների և շահերի պաշտպանության համար, այլ և որենքով նախատեսված դեպքերում նրա ստացվածքի պահպանության համար։

69. Խնամակալությունը նշանակվում է տասնվեցս տարին չլրացրած անչափահասների և սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ ճանաչվածների, այլ և շռայլողների նկատմամբ։ Բացի դրանից, խնամակալությունը նշանակվում է անհայտ, բացակայող կամ մահացած անձանց գույքի վրա՝ որենքով սահմանված դեպքերում։ Խնամակալներն իրենց խնամարկյալների անունից և նրանց շահերը նկատի ունենալով՝ իրականացնում են նրանց իրավունքները և կատարում են նրանց պարտականությունները։

70. Հոգաբարձությունը նշանակվում է տասնվեցս տարեկանից մինչև տասնութ տարեկան անչափահասների, այլ և չափահասների վերաբերմամբ, յեթե վերջինները շնորհիվ իրենց ֆիզիկական վիճակի՝ անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանելու իրենց իրավունքները։ Համապատասխան դեպքերում հոգաբարձուները ոժանդակություն են ցույց տալիս այդ անձանց՝ իրենց իրավունքները կենսագործելիս և իրենց պարտականությունները կատարելիս, ինչպես նաև պաշտպանում են նրանց՝ յերրորդ անձանց կողմից կատարվող չարարկությունից։

71. Ծնողները և վորդեգրողները խնամակալ և կամ հոգաբարձու յեն համարվում առանց հատուկ նշանակման։

72. ՀՍԽ Հանրապետության մեջ ամեն տեսակ խնամակալության և հոգաբարձության մարմիններն են հանդիսանում.—

ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդները.

բ) քաղաքներում—քաղխորհուրդները։

Ծանոթություն.—Այս հոդվածի մեջ հիշատակված ֆունկցիաները կատարելու պարտականությունը քաղխորհուրդները դնում են գործադիր կոմիտեների համապատասխան բաժինների վրա, մասնավորապես անչափահասների նկատմամբ՝ լուսաբաժինների վրա, տկարամտների և հոգեկան հիվանդների նկատմամբ՝ առաբաժինների վրա, խնամարկյալների այլ կատեգորիաների նկատմամբ—սոցապբաժինների կամ սրանց փոխարինող համապատասխան այլ մարմինների վրա։

73. Խնամակալության և հոգեբարձության գործերի վերաբերմամբ գյուղխորհուրդների գործունեության ընդհանուր հսկողությունը դրվում է գավառակային գործկոմների վրա։

74. Խնամակալությունն ու հոգաբարձությունն անմիջականորեն իրականացնելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինները խնամակալ կամ հոգաբարձու չեն նշանակում խնամարկյալին մոտիկ անձերից, կամ այդ նպատակով հասարակական կազմակերպության, արհեստակցական միության, գյուղխորհրդի և այլ կազմակերպության կողմից ընտրված անձերից, իսկ այդպիսիները չլինելու դեպքում—նաև այլ անձերից։

75. Խնամակալությունը և հոգաբարձությունը նշանակվում են ըստ խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի բնակության վայրի, կամ այն վայրում, որտեղ գտնվում է խնամակալության յենթակա գույքը։

76. Խնամակալ կամ հոգաբարձու ընտրելու ժամանակ ուշադրության պետք է առնվեն անձնական հատկությունները, համապատասխան պարտականություններ կատարելու ընդունակությունը, այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն տվյալ անձի և խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի միջև, այլ և, յերբ այդ հնարավոր է՝ նաև խնամարկյալի ցանկությունը։

77. Խնամակալ և հոգաբարձու չեն կարող լինել.—

ա) ՀՍԽՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի «դ», «ե», «զ» և «բ» կետերում հիշված անձերը.

բ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկվածները.

գ) այն անձերը, որոնց շահերը ներհակ են խնամակալության և հոգաբարձության յենթակա անձանց շահերին, ինչպես նաև այն անձերը, որոնք նրանց հետ թշնամական հարաբերություն ունեն, և

դ) անչափահասները։

Ծանոթություն.—Այս հոդվածի «ա» և «դ» կետերում հիշված սահմանափակումները ծնողների վրա չեն տարածվում, բացառությամբ այն դեպքերի, յերբ նրանք հոգեկան հիվանդ են։

78. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց հրաժարվել չի թույլատրվում՝ բացառությամբ այս հոդվածում հիշատակված դեպքերից։ Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց իրավունք ունեն հրաժարվելու՝ ա) նրանք, որոնց 60 տարին լրացել է, բ) նրանք, ովքեր հիվանդության, ֆիզիկական պակասության, նյութական վիճակի կամ զբաղմունքի տեսակի և կամ վարած պաշտոնի պատճառով անկարող են կատարել այդ պարտականությունները, գ) այն անձերը, որոնք իրենց ընտանիքում յերկու կամ ավելի զավակ են դաստիարակում, դ) ծծկեր կամ մինչև ութ տարեկան հասակի զավակ ունեցող մայրերը և ե) արդեն իսկ խնամակալ կամ հոգաբարձու կարգված անձերը։

79. Անչափահասի խնամակալը պարտավոր է հոգալ նրա դաստիարակության, կրթության և նրան հանրային ոգտակար գործունեության պատրաստելու մասին։ Հոգեկան հիվանդի կամ տկարամիտ անձի խնամակալը պարտավոր է միջոցներ ձեռք առնել նրան բժշկելու և խնամարկյալի առողջական վիճակին համապատասխան պայմաններում պահելու համար։

80. Այն դեպքերում, յերբ խնամակալը կամ հոգաբարձուն այս Որենսդրքի 74-րդ հոդվածի հիման վրա ընտրված և նշանակված է խնամակալության և հոգաբարձության հասարակական կազմակերպության կողմից, այդ կազմակերպությունը ուժանդակություն և ցույց տալիս նրան, հսկում է նրա գործունեության վրա և յեզրակացություններ է տալիս խնամակալության և հոգաբարձության մարմնի հանձնարարությամբ։

81. Խնամակալական և հոգաբարձական պարտականությունները կատարվում են ձրիաբար։ Յեթե խնամակալության և հոգաբարձության մարմինների տնորինության ներքո յեկամտաբեր գույքեր կան, ապա այդ մարմինը կարող է վորոշ վարձատրություն նշանակել խնամակալին՝ այդ գույքից ստացվող յեկամտի տասներորդից վոչ ավելի չափով։

27538-60

82. Խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անհրաժեշտ և օգտակար համարված այն ծախքերը, վորոնք կատարված են խնամարկյալի ապրուստը հոգալու համար, կատարվում են նրա ստացվածքի յեկամուտներից, իսկ սրանց անբավարար լինելու կամ կատարելապես բացակայելու դեպքում— խնամարկյալի բուն ստացվածքից, վորն ոտարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլատվությամբ:

Ծանոթություն.—Խրամարկյալը վորևե գույք չունենալու դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմինը միջնորդություն է հարուցանում սոցիալական ապահովության մարմնի առաջ՝ խնամակալին միջոցներ տրամադրելու մասին՝ խնամարկյալի ապրուստը հոգալու համար:

83. Խնամակալն իրավունք ունի իր խնամարկյալին հետ պահանջելու ամեն մի անձնավորությունից, վորը պահում է նրան իր մոտ առանց վորևե օրինական հիմքի:

84. Հոգեկան հիվանդի վրա խնամակալություն նշանակելու ամեն մի դեպքի մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները հայտնում են առողջապահության համապատասխան մարմիններին՝ խնամարկյալի վերաբերմամբ մշտական բժշկական հսկողություն նշանակելու համար, վորպիսին իրագործվում է առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի հրահանգի համաձայն:

85. ՀՍԽՀ այն քաղաքացիների նկատմամբ, վորոնք գտնվում են կամ գույքեր ունեն ԽՍՀ Միության սահմաններից դուրս, խնամակալության և հոգաբարձության գործերը տնորինում են ԽՍՀ Միության արտաքին գործերի ներկայացուցչությունները այս Օրենսգրքի հիման վրա:

ԳԼՈՒԽ 2.

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

86. Խնամակալը կարող է կատարել այն բոլոր գործարքները, վոր կարող եր կատարել ինքը խնամարկյալը, յեթե նա գործունակ լիներ, այլ և այն գործարքները, վոր կարող եր կատարել այն գույքի սեփականատերը, վորի վրա խնամակալություն է նշանակված, բացի ա) գույքը ոտարելուց, բ) գրավ դնելուց, գ) մուրհակներ և այլ պարտաթղթեր տալուց, դ) օրենքով կամ կտակով ստացված ժառանգությունից հրաժարվելուց, գույքը յերկար ժամանակով վարձակալության տալուց (մեկ տարուց ավելի), զ) խնամարկյալին պատկանող ձեռնարկության գործունեությունը դադարեցնելուց և ը) ընկերության պայմաններ կընքելուց: Այս գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը: Խնամարկյալին պատկանող գույքի նվիրումը, ինչպես նաև նրա անունից յերաշխավորության պայմանագիր կնքելը բնավ չի թույլատրվում:

Ծանոթություն.—Շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման յենթակա կամ գործածության համար արդեն անպետք դարձած գույքը, յեթե միայն վերջնի արժեքը հիսուն ռուբլուց ավելի չէ,—կարող է վաճառվել առանց խնամակալության և հոգաբարձության մարմինների թույլատվության:

87. Թույլատրելով գույքի ոտարումը կամ գրավ դնելը, խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ցուցմունքներ տալ խնամակալին այն մասին, թե ստացած գումարներն ինչ կարիքների վրա պետք է ծախսել:

88. Խնամակալը չի կարող վորևե գործարք կատարել իր իսկ խնամարկյալի հետ, վոչ էլ նրա ներկայացուցիչը հանդիսանալ խնամարկյալի և իր ամուսնու կամ մերձավոր ազգականների միջև գործարքներ կնքելիս կամ դատական վեճերի քննության ժամանակ և վոչ էլ ձեռք բերել խնամարկյալի անունից պարտամուրհակներ: Խնամարկյալի՝ իրեն—խնամակալին կամ նրա ամուսնուն և կամ ազգականներին տալիք պարտքերը, յեթե այդպիսիներն արված են մինչև տվյալ անձի խնամակալ նշանակվելը, հատուցվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

89. Անչափահաս խնամարկյալին դաստիարակության և կրթության տալու, կամ հոգեկան հիվանդին այլ անձանց խնամքին հանձնելու համար խնամակալը պետք է ստանա խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը:

90. Այն անձերը, վորոնց վերաբերմամբ, համաձայն այս Օրենսգրքի 70-րդ հոդվածի, հոգաբարձություն է նշանակվում, գործարքներ են կատարում անպայման իրենց՝ հոգաբարձուների համաձայնությամբ: Այս Օրենսգրքի 86-րդ հոդվածում հիշատակված սահմանափակումները տարածվում են նաև հոգաբարձուների վրա: Հոգաբարձության ներքո գտնվողի անձնական աշխատան-

քով ձեռք բերված առարկաների և գումարների վերաբերյալ գործարքներ կատարելու համար խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը չի պահանջվում։

91. Խնամակալները ու հոգաբարձուները հանդես են գալիս խնամարկյալների և հոգաբարձության ներքո գտնվողների շահերը պաշտպանելու համար բոլոր հաստատություններում, վորոնց թվում նաև դատական հաստատություններում, ինչպես նաև ստացվածային պայմանագրեր կնքելիս։

92. Յեթե խնամակալը կամ հոգաբարձուն անփույթ գտնվեն դեպի իրենց պարտականությունները կամ ի չարը գործ դնեն այդպիսիները, կարող են հեռացվել իրենց պարտականությունները կատարելուց խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի, կամ պետական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների կամ առանձին քաղաքացիների միջնորդությամբ, այլ և խնամակալության և հոգաբարձության մարմնի նախաձեռնությամբ։

93. Խնամակալների և հոգաբարձուների գործողությունների դեմ կարելի է գանգատ տալ խնամակալության և հոգաբարձության համապատասխան մարմիններին թե այն անձանց կողմից, վորոնք գտնվում են խնամակալության կամ հոգաբարձության ներքո և թե պետական կամ հասարակական հաստատությունների և յերրորդ անձանց կողմից,

94. Խնամակալության և հոգաբարձության գործերի մասին գյուղխորհուրդների կայացրած վորոշումների և կարգադրությունների դեմ գանգատները տրվում են համապատասխան շրջանային գործկոմի նախագահության, վորի վորոշումները վերջնական են. ինչ վերաբերում է քաղխորհուրդների վորոշումներին, ապա դրանք համարվում են վերջնական և հետագա բողոքարկման յենթակա չեն։

ԳԼՈՒԽ 3

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

95. Խնամակալության և հոգաբարձության գործերը քննելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը հրավիրում է դիմում տվողներին, գանգատավորներին, խնամակալներին և հոգաբարձուներին, գործով շահագրգռված անձերին, վկաներին, փորձագետներին, այլ և անհրաժեշտության դեպքում խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող կամ խնամակալության ու հոգաբարձության յենթակա անձերին։ Դիմողների, գանգատավորների և այլ անձերի չներկայանալը գործի քննության արգելք հանդիսանալ չի կարող, յեթե նրանց հրավեր ուղարկող մարմինը նրանց ներկայությունը պարտադիր չի համարում։

96. Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու կամ վերացնելու, խնամակալներ կամ հոգաբարձուներ նշանակելու, նրանց ազատելու, գույքն ոտարելու կամ գրավ դնելու, իրավունքներից հրաժարվելու, բողոքները, հաշվետվությունները և յերեխայի դաստիարակության հետ կապված այլևայլ խնդիրները քննելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները վորոշում են կայացնում, վորոնք հայտարարվում են շահագրգռված անձերին։

97. Յեթե այն անձը, վորի վերաբերմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն է նշանակված, գույք ունի խնամակալության և հոգաբարձության վորևե այլ մարմնի գործունեության շրջանում, ապա վերջնին կարող է հանձնարարվել այդ գույքի տեսչությունը, նրա վաճառքը և այն բոլոր գործողությունների կատարումը, վորոնք վերաբերում են խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց ստացվածային իրավունքներին և շահերին։

98. Անչափահասների վերաբերմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտության (այս Որենսգրքի 69-րդ հոդվ.) և խնամակալ նշանակելու մասին պարտավոր են յերեք օրվա ընթացքում տեղեկացնել ա) տնային վարչությունները, անատերերը և վարձակալները, յեթե այդ տներում կան խնամակալության յենթակա անչափահասներ, բ) քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինները, յեթե մահվան փաստը տոմարագրելու պահին նրանց հայտնի դառնա անխնամ մնացած անչափահաս վորբերի, այլ և տոմարագրված ընկեցիկների և վորբերի մասին, գ) դատական կատարածուները, յերբ գույքը ցուցակագրելու ժամանակ նրանք խնամակալության յենթակա անչափահասներ հայտնաբերեն, դ) դատական մարմինները և միլիցիան այն դեպքում, յերբ ազատազրկման են դատապարտում, կամ կալանքի տակ են վերցնում իրենց խնամքի տակ անչափահասներ ունեցող անձանց, յերբ այդ անչափահասները դրա հետևանքով մնում են առանց պատշաճ հսկողության, ե) խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձանց հետ ազ-

գականությամբ կամ միատեղ տնտեսությամբ կապված քաղաքացիները։

Մանրություն.—Խնամակալության և հոգաբարձության մարմինը անչափահասի վերաբերմամբ խնամակալություն է նշանակում նաև սեփական նախաձեռնությամբ, յեթե տեղեկանում է այդ անելու անհրաժեշտության մասին։

99. Խնամարկյալների գույքի վաճառքը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վորոշմամբ՝ հրապարակային աճուրդով, կամ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետների կողմից վորոշված ազատ գնով։ Աճուրդը յենթակա յե խնամակալության և հոգաբարձության մարմնի հետագա հաստատման։

100. Խնամարկյալին պատկանող դրամական գումարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառությամբ այն գումարների, վորոնք անհրաժեշտ են նրանց ապրուստը հոգալու և նրանց գույքը կառավարելու համար, պահվում են պետական հաստատություններում (աշխատավորական խնայողական դրամարկղներում, պետական բանկի բաժանմունքներում և այլն) և չեն կարող գտնվել խնամակալի ձեռքին։

101. Խնամակալները և հոգաբարձուները յուրաքանչյուր տարի վոչ ուշ, քան մինչև փետրվարի 1-ը գրավոր հաշվետվություն են ներկայացնում նախընթաց տարվա մասին խնամակալության և հոգաբարձության համապատասխան մարմնին։ Խնամակալի կամ հոգաբարձվի հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ վոչ միայն այն մասին, թե գույքն ինչպես է կառավարվել, կամ ինչ յեկամուտներ են ստացել իրենց խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձերը, կամ թե ինչ ծախքեր են կատարված, այլ և այն մասին, թե ինչպես է իրագործվել խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի վերաբերյալ անհրաժեշտ հոգատարությունը, ինչպես է ընթացել անչափահաս խնամարկյալի դաստիարակությունը, կրթությունը, նրա նախապատրաստությունը ոգտակար գործունեության համար և այլն։

Խնամակալությունը կամ հոգաբարձությունը դադարելուց հետո խնամակալը կամ հոգաբարձուն ընդհանուր հաշվետվություն են ներկայացնում գույքը կառավարելու և անօրինելու մասին։

102. Հաշվետվությունները քննվում են ըստ էության և այն դեպքում, յերբ ճիշտ են համարվում՝ հաստատվում են։ Հակառակ պարագային խնամակալից կամ հոգաբարձուից պահանջվում է ներկայացնել բացատրություններ և արդարացուցիչ փաստաթղթեր։

103. Խնամակալությունը դադարում է.—

ա) անչափահասների նկատմամբ, յերբ նրանք դառնում են չափահաս, բացառությամբ այն դեպքերի, յերբ սահմանված կարգով բժշկական քննության յենթարկելուց հետո՝ անհրաժեշտ է համարվում շարունակել խնամակալությունը նրանց հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով։

բ) հոգեկան հիվանդների նկատմամբ, յերբ սահմանված կարգով քննելուց հետո՝ նրանք առողջացած են համարվում։

գ) շռայլողների նկատմամբ, յերբ օրինական ուժ կստանա դատարանի՝ նրանց գործունակ ճանաչելու վերաբերյալ վորոշումը։

դ) գույքի նկատմամբ, յերբ անհայտ բացակայողը կը ներկայանա, կամ յերբ ժառանգությունը կընդունվի։

ե) խնամարկյալի մահվան դեպքում։

ԳԼՈՒԽ 4.

ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՏԿԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

104. Հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով խնամակալություն նշանակելու համար բժշկական քննությունը կատարվում է հատուկ հանձնաժողովի կողմից՝ համապատասխան շրջանային գործկոմի առաջին վարիչի կամ նրան փոխարինող անձի նախագահությամբ և առնվազն յերկու բժշկի անդամակցությամբ, վորոնցից մեկն անպայման հոգեբույժ պետք է լինի։

105. Հանձնաժողովի նիստի տեղի և ժամանակի մասին ծանուցում է արվում այն անձերին և հաստատություններին, վորոնք հարուցել են բժշկական քննության յենթարկելու միջնորդությունը։

106. Այս Որենսգրքի 104-րդ հոդվ. նախատեսված հանձնաժողովին իրավունք է վերապահվում քննության յենթակա անձին տեղավորելու մասնագիտական բուժական հիմնարկության մեջ վոչ ավելի, քան յերկու ամիս ժամանակով, կամ նրան հսկողության յենթարկելու տան մեջ։ Հարկ յեղած դեպքում հանձնաժողովը հարցաքննում է հիվանդին բուժող բժշկին և այն բոլոր անձանց, վորոնց անունը հիվանդը տալիս է։

107. Քննության հետևանքների մասին կազմվում է մանրամասն արձանագրություն, որը ստորագրում են քննությանը մասնակցող բոլոր անձերը։ Արձանագրության մեջ պետք է հիշատակված լինի, թե տվյալ անձը հոգեկան հիվանդ է, թե տկարամիտ, և արդյոք կարիք կա խնամակալություն նշանակելու։

108. Հոգեկան հիվանդին առողջացած համարելու կամ խնամակալությունը վերացնելու միջնորդությունը՝ բացի այս Որենսգրքի 98-րդ հոդվածում հիշատակված անձերից և հաստատություններից, կարող է հարուցվել նաև այն բուժական հիմնարկության կողմից, որտեղ տեղավորված է յեղել հիվանդը բժշկվելու համար, կամ հենց իր իսկ հիվանդի կողմից։

109. Հոգեկան հիվանդին բժշկական քննության յենթարկելը, նրա առողջացած, կամ խնամակալությունից ազատվելու յենթակա համարելը կատարվում է այս Որենսգրքի 104—107 հոդվածների կարգով։

110. Քննության հետ կապված ծախքերը կատարվում են քննության յենթարկված անձի գույքի հաշվին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ պետության հաշվին։

Ծանոթություն.—Առողջ համարված անձի բժշկական քննության հետ կապված ծախքերը կատարվում են քննության յենթարկելու խնդիրը հարուցած անձանց հաշվին։

111. Բժշկական հանձնաժողովի՝ մեկին հոգեկան հիվանդ կամ տկարամիտ ճանաչելու վերաբերյալ վորոշումը կարող է բողոքարկվել մեկ ամսվա ընթացքում բոլոր շահագրգռված անձերի և հաստատությունների կողմից

112. Նախորդ հոդվածի համաձայն բժշկական հանձնաժողովի վորոշումների դեմ տրված գանգատները քննելու համար Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատին առընթեր կազմակերպվում է հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով.—Առժողկոմատի բուժական բաժնի վարիչը, յերկու բժիշկ-հոգեբույժ՝ նշանակված Առժողկոմի կողմից, Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի ներկայացուցիչները։

113. Բողոքները քննելիս Առժողկոմատին առընթեր հանձնաժողովը կատարում է ներկայացրած տպագրությունների ստուգում, կամ հարկ յեղած դեպքում՝ ինքնուրույն կերպով անհրաժեշտ

նություններ է ժողովում և հիվանդին վերաքննության է յենթարկում։

Ծանոթություն.—Յեթե հանձնաժողովը այդ վերաքննությունն ավելորդ է համարում, ապա այդ մասին նա պատճառաբանված վորոշում է կայացնում։

ԲԱԺԻՆ IV.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

114. Քաղաքացիական կացության ակտերի (ծննդյան, մահվան, ամուսնության, ապահարզանի և վորդեգրման) տոմարագրությունը գյուղական վայրերում կատարվում է գյուղխորհուրդների, իսկ քաղաքային վայրերում—քաղխորհուրդների միջոցով։

115. Նախորդ հոդվածում նշված տոմարագրությունները, ինչպես նաև կատարված տոմարագրությունների մասին սկզբնական վկայականները տալը տեղի յե ունենում ձրիաբար և ազատ է ամեն տեսակ տուրքերից։

116. Քաղաքացիության կացության ակտերի տոմարագրությունների մատյանը ունի յերկու որինակ։

117. Յուրաքանչյուր տոմարագրություն, վոր կատարվում է համապատասխան մատյանի մեջ, պետք է կարդացվի ղեմում տվողներին, ստորագրվի նրանց կողմից՝ յեթե նրանք գրագետ են, իսկ անգրագիտության դեպքում՝ յերկու գրագետ վկաների կողմից և յերկու դեպքում ել հավասարապես՝ արձանագրությունը կազմող պաշտոնյայի կողմից։

118. Քաղաքացիական կացության ակտերի մատյաններում կատարված տոմարագրությունների մեջ ուղղումներ մտցնելու անհրաժեշտության դեպքում, յեթե վեճ և առարկություն չկա, հիշյալ ուղղումները կատարվում են քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության կենտրոնական մարմնի թույլատվությամբ։

119. Մատյաններում կատարված տոմարագրությունները կարող են վեճի առարկա դարձվել շահագրգռված անձանց կողմից՝ դատական կարգով։

120. Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյանները վարելու կարգը սահմանվում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի հրահանգով։

Գ Լ Ո Ւ Խ 2.

Ա. ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

121. Ծննդյան վերաբերյալ հայտարարությունը պետք է տրվի յերկու շաբաթվա ընթացքում, հաշված ծննդյան օրից։

Ծանոթություն 1.—Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության կենտրոնական մարմինն իրավունք է վերապահվում առանձին վայրերի համար այս հոդվածում նշված ժամանակամիջոցը յերկարելու, սակայն վոչ ավելի, քան մինչև վեց շաբաթ։

Ծանոթություն 2.—Այս հոդվածում մատնանշված ժամանակամիջոցի խախտումով ներկայացրած դիմումներն անանպայման պետք է տոմարագրվեն։ Վոչ հարգելի պատճառներով ժամանակամիջոցն անցկացնելու դեպքում այդ հայտարարությունը ներկայացնելու պարտականություն ունեցող անձը կարող է վարչական կարգով տուգանքի յենթարկվել։

ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդների կողմից մինչև մեկ ռուբլի չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև յերկու օր, ժամանակով, և

բ) քաղաքներում—քաղխորհուրդների կողմից մինչև 3 ռուբլի, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև 5 օր ժամանակով։

122. Ծննդյան մասին բանավոր կամ գրավոր հայտարարություն է տրվում քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններին ըստ ծննդյան վայրի, կամ ըստ ծնողների վորևե մեկի բնակավայրի ծնողների կամ նրանցից մեկն ու մեկի կողմից։ Իսկ ծնողների հիվանդության, մահվան կամ վորևե պատճառով տոմարագրել տալու հնարավորությունից զուրկ լինելու դեպքում տոմարագրությունը կարող է կատարվել ազգականների կամ մերձակա հարևանների կողմից և կամ այն ծննդաբերական հաստատության վարչության կողմից, վորտեղ գտնվելիս է յեղել մայրը՝ զավակը ծնվելու ժամանակ։

123. Ծննդյան տոմարագրության մեջ մատնանշված պետք է լինի ծննդյան ժամանակն ու տեղը, զավակի սեռը, նրան տրվող անունն ու ազգանունը, ինչպես նաև ծնողների անունը, հայրանունը, ազգանունը, մշտական բնակավայրը, զբաղմունքը և հասակը։

124. Յեթե հայտարարություն տվողը մայրն է, ապա նա

պարտավոր է մատնանշել նաև հոր անունն ու ազգանունը կամ հայտարարել, վոր կամ չի կարող, կամ չի կամենում պահանջվող տեղեկությունները տալ։

125. Ծննդյան մասին հայտարարություն պետք է տրվի նաև մեռած յերեխա ծնվելու դեպքում, վորի մասին համապատասխան տոմարագրություն է կատարվում ծնունդների տոմարագրության մատյանի հատուկ սյունակում։

126. Տոմարագրությունն անհրաժեշտ է նաև յերեխա գրտնելու դեպքում. այս դեպքում հայտարարությանը պետք է կցվի միլիցիայի կողմից կազմած արձանագրությունը, իսկ միլիցիա չլինելու դեպքում՝ գյուղխորհրդինը, հիշատակելով յերեխային գտնելու ժամանակը, տեղը և հանգամանքները։

Բ. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

127. Մահվան դեպքերի տոմարագրության մատյանն են մուծվում ինչպես մահվան, այնպես և վորևե մեկին գատարանի կողմից մահացած ճանաչելու դեպքերը։

128. Տեղի ունեցած մահվան մասին հայտարարություն պետք է տրվի կատարված դեպքից հետո վոչ ուշ, քան յերեք որվա ընթացքում, իսկ բռնության հետևանքով տեղի ունեցած մահվան կամ դիակը հայտարերելու դեպքում՝ հիշյալ դեպքի հաջորդ որվանից վոչ ուշ։

Ծանոթություն.—Այս հոդվածում մատնանշված ժամանակամիջոցի խախտումով ներկայացրած դիմումներն անպայման պետք է տոմարագրվեն։ Վոչ հարգելի պատճառներով ժամանակամիջոցն անցկացնելու դեպքում, այդ հայտարարությունը ներկայացնելու պարտականություն ունեցող անձը կարող է վարչական կարգով տուգանքի յենթարկվել։

ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդների կողմից մինչև մեկ ռուբլի, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև 2 օր ժամանակով, և

բ) քաղաքներում—քաղխորհուրդների կողմից մինչև յերեք ռուբլի, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև հինգ օր ժամանակով։

129. Մահվան մասին հայտարարություն պետք է տրվի գրավոր կամ բանավոր՝ մահացածի հետ միասին ապրողների կողմից, իսկ յեթե այդպիսիներ չկան—տնային վարչության, հարևանների կամ այն հաստատության (հիվանդանոց, ուղղիչ աշ-

խատանքի հիմնարկության և այլ) վարչության կողմից, վորտեղ մահը տեղի չի ունեցել, և կամ դիակը հայտաբերող միլիցիայի կողմից։

130. Մահվան մասին տրվող հայտարարության մեջ նշատակվում են այն բոլոր տեղեկությունները, վոր հայտարարողն ունի մահացածի մասին, և մասնավորապես՝ մահացածի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, նրա վերջին բնակավայրը, նրա ընտանեկան դրությունը, մահվան տարին, ամիսը և օրը, մահվան պատճառը, այլ և՝ հայտարարություն տվողի անունը, հայրանունը, ազգանունը և բնակավայրը։

131. Մահվան փաստը վավերացված պետք է լինի բժշկական վկայականով, իսկ վորտեղ այդ հնարավոր չէ՝ յերկու վկայի կողմից։

132. Դիակ գտնելու մասին տրված հայտարարությանը կցվում է միլիցիայի կազմած արձանագրությունը։

133. Դատարանի վորոշումը վորևէ մեկին մահացած ճանաչելու մասին այն դեպքերում, յերբ մահվան փաստը հաստատվում է դատարանով, տոմարագրվում է ըստ մահացած հայտարարված անձի վերջին հայտնի բնակավայրի, հիշատակելով թե դատարանի անունը և թե վորոշում կայացնելու ժամանակը։

Գ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՊԱՀԱՐԶԱՆԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՈՒՆԸ

134. Ամուսնությունը տոմարագրել ցանկացողներն այդ մասին հայտարարություն են տալիս քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմնին՝ ըստ դիմողներից մեկն ու մեկի բնակության վայրի։

135. Ամուսնությունը տոմարագրել տվողները հայտարարություն տալու ժամանակ պարտավոր են ներկայացնելու իրենց ինքնությունը հաստատող վկայականներ, ստորագրություն՝ այս Որենսգրքի 1-ին բաժնի 2-րդ գլխում մատնանշված արգելքները չլինելու մասին, այլ և բժշկական վկայական այն մասին, վոր նրանք փոխադարձաբար իրազեկ են իրենց առողջական վիճակի մասին, մասնավորապես վեներական—հոգեկան և պալարախտային հիվանդությունների վերաբերմամբ, ինչպես նաև մատնանշել, թե նրանցից յուրաքանչյուրը քանիերորդ անգամն է ամուսնանում, հաշված և տոմարագրված և չտոմարագրված ամուսնությունները, և․ քանի զավակ ունի։

Ծանոթություն.—Այս հոդվածում հիշված հիվանդություններից վորևէ մեկով տառապելու մասին բժշկական վկայական ներկայացնելը չի կարող ամուսնության տոմարագրության արգելք լինելը,—բացի սիֆիլիսից, վորը արգելք է հանդիսանում ամուսնությունը տոմարագրելու։

136. Ամուսնությունը տոմարագրող պատասխանատու պաշտոնյան պարտավոր է կարդալ ամուսնացողներին այս Որենսգրքի 4, 5 և 6 հոդվածները և նախազգուշացնել սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին։ Այս բոլորից հետո կատարված տոմարագրությունը կարդացվում է, ստորագրվում է և վավերացվում է պաշտոնյայի կողմից։

137. Ամուսնության տոմարագրությունը ամուսնացողների ցանկությամբ կարող է կատարվել նաև վկաների ներկայությամբ։

138. Յեթե մինչև ամուսնության տոմարագրությունն ստորագրելը վորևէ մեկից տոմարագրության դեմ օրինական արգելքներ լինելու մասին հայտարարություն ստացվի, պաշտոնյան պարտավոր է կասեցնել տոմարագրությունը և պահանջել, վոր հայտարարություն անողը համապատասխան փաստական ապացույցներ ներկայացնի այն ժամանակամիջոցում, վոր նրան կտա քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմնի վարիչը։

139. Ոտարերկրացիների և խորհրդային քաղաքացիների միջև կայացած ամուսնությունները, այլ և ԽՍՀ Միության տերրիտորիայի վրա ոտարերկրացիների միջև կայացած ամուսնությունները, տոմարագրվում են ընդհանուր հիմունքներով։

Ծանոթություն.—Փոխադարձության սկզբունքներով թույլատրվում է տոմարագրել ոտարերկրացիների ամուսնությունները համապատասխան պետությունների ԽՍՀ Միության տերրիտորիայի վրա գործող դեսպանատներում և ներկայացուցչություններում, պահպանելով այս Որենսգրքի 1-ին բաժնի 2-րդ գլխում նախատեսված պայմանները։

140. ԽՍՀ Միության սահմաններից դուրս ոտարերկրացիների միջև համապատասխան պետությունների օրենքներով կատարված ամուսնությունները Հ. Ս. Խ. Հ. տերրիտորիայի վրա այս Որենսգրքի առաջին բաժնի 1-ին գլխի պատշաճ կարգով ձեվակերպված են համարվում։

141. Ամուսնությունը լուծելու հայտարարությունը գրավոր կամ բանավոր ձեվով ներկայացվում է քաղաքացիական կացու-

թյան ակտերի տոմարագրության մարմնին՝ ըստ ամուսիններից վորևե մեկի բնակության վայրի։

142. Յեթե դիմում ներկայացնողը վորևե փաստաթուղթ չունի, վորով կարող է հաստատել լուծվող ամուսնության տոմարագրված լինելը, ապա նա ստորագրություն է տալիս այդ մասին, հիշատակելով ամուսնության տոմարագրության ժամանակը և տեղը, և իր վրա յե վերցնում իր հաղորդած տեղեկությունների ճշտության պատասխանատվությունը։

143 Յեթե ամուսնությունը լուծվելու վերաբերյալ հայտարարությունը տրվում է ամուսիններից վորևե մեկի կողմից, ապա մյուս ամուսնուն ուղարկվում է ամուսնության լուծման տոմարագրության պատճենը՝ դիմում տվողի կողմից մատնանշված հասցեյով։

144. Ամուսնալուծությունը ճշտող այն փաստաթղթերը, վորոնք համապատասխան պետությունների օրենքներով նախատեսված կարգով տրված են ստաբերկրացիներին, հավասարեցվում են ամուսնությունների տոմարագրության մատյանների քաղվածքներին։

Դ. ԱՅԼ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

145. Համապատասխան մարմինների վորոշումները՝ վորդեգրման, ազգանունը փոխելու, հայրությունը կամ մայրությունը ճանաչելու և կամ ծննդյան տոմարագրությունը ուղղելու և լրացնելու մասին յերկու շաբաթվա ընթացքում պետք է ներկայացվեն քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններին՝ համապատասխան մատյաններում հիշատակություն անելու համար։

Գ Լ Ո Ւ Խ 3.

ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԻ ԿՈՐՍՏՅԱՆ ՅԵՎ ԿԱՄ ՎՈՐԵՎԵ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅԴ ՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՀՆԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

146. Այն դեպքում, յերբ քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյանները կամ նախկին չափաբերական մատյանները կորել և վոչնչացել են, և կամ վորևե պատճառով շահագրգռված անձերից անկախ՝ վերջիններին հնարավոր չէ քաղվածք կամ տեղեկանք տալ ծննդյան, ամուսնության; ապահարզանի, մահվան և կամ տոմարագրության յենթակա դեպքի մասին,—համապատասխան դեպքը՝ շահագրգռված անձանց հայտարարություններին համաձայն հաստատվում է ժողովրդական դատարանի կողմից՝ ըստ շահագրգռված անձանց բնակավայրի։

Դատարանի վորոշումը, վորով հաստատվում է ինչպես մատյանների կորստյան, վոչնչացման փաստը կամ նրանցից վորևե քաղվածք տալու անհնարությունը, այնպես էլ բուն դեպքը, վոր յենթակա յե վերստին տոմարագրության, հիմք է ծառայում համապատասխան դեպքը կրկին տոմարագրելու քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյաններում այն հիշատակությամբ, թե տվյալ տոմարագրությունը կրկնակի յե և կատարվում է վերստին կատարված տոմարագրության հիման վրա՝ համապատասխան քաղվածք տալու նպատակով։

Բանաբերության տպարան, Յերևան

Գլավլիտ № 580 Տիրաժ 2000

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ

Кодекс законов о браке, семье и опеке ССРА

Издание Наркомюста ССРА
Эривань 1934 г.

ՀՀ Ազգային գրադարան
NL0218258

37. 300